ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «10» մարտի 2020թ.

2020թ-ի փետրվարի 25-ից մինչև մարտի 10-ը, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մասնաշենքում՝ ՀՀ, ք. Երևան, Միհր Մկրտչյան 5Բ հասցեում, տեղի ունեցավ ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Նարա	Դավթյան	Հանձնաժողովի վարչատնտեսական վարչության պետ.
Աննա	Յոլչյան	Հանձնաժողովի վարչատնտեսական վարչության պետի տեղակալ.
Անուշ	Ստեփանյան	Հանձնաժողովի քարտուղարության պետ.
Մերի	Ղազարյան	Հանձնաժողովի հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ.
Մոշչենոկ	Միխայիլ	Հանձնաժողովի նախագահի օգնական:

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Տիրան	Լաճիկյանը	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գնումների մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արմեն Խաչատրյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:

2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Նարա Դավթյանը նշեց, որ գնման առարկայի նախահաշվային գինն է՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Ընդհանուր նախահաշվային գինը
1.	**«Թուղթ A4 ձևաչափի»**	493000

ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի փետրվարի 25-ին, ժամը «17:30»-ին: ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ կետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/հ	Մասնակցի անվանում	Հասցե	Էլ՝ փոստ
1.	«Սմարթլայն» ՍՊԸ	ՀՀ, Երևան, Վարդանանց 110	ssmartline@mail.ru
2.	«ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ	ՀՀ, Երևան, Քրիսթափորի 2/2	area_2018@bk.ru
3՝	«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ, Երևան, Սմբատ Զորավարի 11/1	ssdgroup2000@gmail.com
4՝	«ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ	ՀՀ, Երևան, Վարդանանց փ՝, շ՝, 10, 37 բն՝	blammollc@mail.ru

Որոշվեց՝

1. Նարա Դավթյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ «ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊ, «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունների, մասնավորապես «ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված N 1.1-ում 1-ին չափաբաժնի մասով սխալ էր նշված գնման առարկան, իսկ «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված լիազորագիրը հաստատված չի եղել էլեկտրոնային ստորագրությամբ, իսկ հավելված 1.1-ում թերի է լրացված 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- Մասնակցիների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակցիների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	**Ընտրված մասնակից**	**Սմարթլայն ՍՊԸ**	378000	453600
	2	**«ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ**	386666,67	464000
	3	**«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**	393333	472000
	4	**«ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ**	460000	552000

Որոշվեց՝

1. Նարա Խաչատրյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Սմարթլայն ՍՊԸ-ի և «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:
3. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

4. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել «ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին և «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- «ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն և «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունը:

Որոշվեց՝

1. «ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի և «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Դավթյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Յոլչյան

Ա. Ստեփանյան

Մ. Ղազարյան

Մ. Մոշչենոկ

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան